

Գտոհնամակին, որպէս զի ինք զինքը Գահնամակին հետ համաձայնեցընելու ջանքը ակներեւ դառնար:

Ինչո՞ւ հնարած է խորենացի գահաստիճանի այս տարուբերումը, ելեւէջը:

Խալաթեանց կը մեկնէ (անդ, 100—102). Մեզի անծանօթ պատճառներով՝ Կամսարականք կը վայլեն Պատմահօր համակրանքը: Իր այս համակրանքին հետեւութեամբ նա շուայլ առատաձեռնութեամբ տոհմիս կը բաշխէր առաջին գահերը թագաւորութեան շրջանին: Սակայն խորենացի կը ճանչնար նաեւ Գահնամակը, որուն մէջ շատ անհաճոյ կերպով թ. Գ. գահ տրուած էր իրեն համեմատ «յետ արքայի երկրորդ», Կամսարականց: Ակնբախ հակասութիւն մը, զոր բառնալու համար կը ստեղծէր գլ. ծ, ծա, միջադէպերը, որպէս զի ապա գար միանար Գահնամակին՝ կե գլխով:

Մեր հետապնդած նպատակին համար Մեսրոպ Երէցի ներկայացուցած ցանկը (Սփ., Հայկ. Զ, 32—38) բոլորովին զուրկ է նշանակութենէ:

Ինչ կերպարանք ստացան հայ նախարարական գահերը Վահանեան կոնիւնէրէն յետոյ: Կամսարականք Մամիկոնեաններու հետ միասին ունեցած պիտի ըլլան արժանաւոր բարձրացում: Գահերու կամ բարձի հարցը Արշակունի հարստութեան անկումով կը կորսնցնէր իր հաստատուն կայանը: Այնուհետեւ քաջութիւնը կ'որոշէր անոնց դիրքը եւ երկու մեծ պետութիւններուն վերին կամքը աղեկամի կը տրամագրէր ու հաւատարիմ տոհմեր կը բարձրացնէր: Ուստի շատ բնական է, որ Հայրենիքի համար անմահ արդիւնք վաստկող Մամիկոնեանք ու Կամսարականք նախագահ եղած ըլլան Ե. Զ. Է. դարերուն: Եւ իրապէս անոնց անունները առաջին տեղը կը գրաւեն օ. հ. Գիրք թղթոցի յիշուած (էջ 42, 48) ստորագրութիւններուն մէջ:

Հ. Ս. ԿՈՐԵԱՆ



Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԵԱՆ ԹԱԳՈՒՄԸ, ԵՒ ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԱՐԺՅՈՎԱԿԻՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Չամչեան այսպէս կը պատմագրէ Կ. Պոլսի Հայ պատրիարքութեան ծագումը.

(1453) — «Սոյն այս սուլտան Մէհմէտ յառաջնմէ մինչդեռ ի Պրուսա էր, գութ ունէր ի վերայ ազգին Հայոց, եւ ի վերայ առաջնորդի տեղւոյն՝ որ կոչուի Զովակիմ եպիսկոպոս. եւ յաւուր միում ի խօսիլ նորա ընդ նմա, եւ յասել ցնա առաջնորդին, բարձրացուցէ տէր զթագաւորութիւն քոյ քան զամենայն, խոստացաւ նմա սուլտանն, եւ ասէ. եթէ յաջողեսցի ինձ առնուլ նաեւ զկոստանդինուպոլիս՝ տարայց զքեզ անդր հանդերձ մեծամեծօք Հայոց եւ արարից զքեզ գլուխ նոցա: Ապա իբրեւ էառ զայն, եւ հաստատեաց անդ զթագաւորութիւն իւր, յետ ամաց ինչ յորժամ դէպ եղեւ նմա գնալ ի Պրուսա, յիշեալ զխոստումն՝ զոր արարեալն էր, երբ անտի ի կոստանդինուպոլիս զՅովակիմ եպիսկոպոս հանդերձ քանի մի երեւելի տամբք Հայոց (զոր ոմանք վեց տուն ասեն), ի թուին Հայոց. ԶԹ. եւ ետ նոցա տեղի բնակութեան՝ ոմանց ի ներքս ի քաղաքն, եւ ոմանց ի Ղալաթիա, ուր արդէն կային բազում Հայք. երբ եւ ի Գաղատիոյ զչորս տունս Հայոց, եւ զՅովակիմ եպիսկոպոս արքունի նամակաւ կացուցեալ առաջնորդ կոչեաց զնա փաթրիկ, այսինքն պատրիարք. սուեալ նմա իշխանութիւն տիրելոյ ի վերայ Հայոց եղելոց ի Զունաստան եւ յԱնատոլիա: Եւ անտի սկսեալ տեւէ ցարդ յաջորդութիւն այնր պատրիարքութեան ի կոստանդինուպոլիս, զորոց զկարգն դիցուք ի վախճան մատենիս (Չամչեան, Պոմ. Հայոց, Գ, էջ 500):

Եւ «Պատրիարքունք Կոստանդինուպոլսոյ ի Հայոց, ցանկին մէջ Չամչեան 17 տարի պատրիարքութիւն կու տայ Զովակիմին, 1461—1478 (Անդ, Ժամանակագրական, էջ 113):

Իսկ Օրմանեան իր Ազգապատումին մէջ Զովակիմի մասին կը գրէ.

— «Յրիւ ակնարկներ մեզի կը ներկայեն Զովակիմ եպիսկոպոս մը, որ կուտինա քաղաքի Հայ եկեղեցին նորոգած է, որ Պրուսայի եպիսկոպոս կոչուած է (Օ1 ՕՐԱ. 79), որ ֆիլիպէի ալ առաջնորդ յիշուած է (ՓԻՐ. 224), եւ որ կոստանդինուպոլսոյ Հայերուն հոգեւոր պետն եղած է: Այդ յիշատակութիւններէն դժուար է հետեւցնել, թէ Զովակիմը՝ Օրմանեան պե-

Կազմուած ցուցակին հետեւ յարձեւալ, կը շարունակէ Օրմանեացի — «Սովորաբար կը պատմուի թէ ֆաթիհ ուղելով Հայերու դիրքը կանոնաւորել եւ բարձրացնել, որոշեց անոնց ալ պետ մը տալ Յուսէպ Զաքարիայի համար կազմուած նաց պատրիարք գենարդիսի համար նալ-կերպով եւ արտօնութիւններով, եւ այս նպատակով Յովակիմը 1461ին Պրուսայէ կանչեց, եւ Հայերու հոգեւոր պետ հռչակեց, Պատրիարք կամ փաթրիք անունով եւ իրաւունքով։ Այս պատմութիւնը կը լրացուի Կոստանդնուպոլսի (Համադրուած խոստումով (Համադրուած առաջ արուած խոստումն Նախնական Գ., 500), եւ կ'աւելցուին Նախնական Գ., 500), եւ մինչեւ իսկ յաղթականին մտերմութեան, եւ մինչեւ պարագաները։ Չնայ սուրբ օրհնած ընտանիքի պարագաներով ճշդեւ այդ կրնար վաւերական զգուշանալ ճշդեւ այդ կէտերը, բայց եւ ոչ կրնանք ընդունիլ որ Յուսէպ

մը ունենալէ էր:

Սակայն տրուած պատրիարքութիւնը լոկ
արտաքին պատիւ եւ արտաքին իրաւունք էր,
եկեղեցական տեսակէտով պատրիարքական աթոռ
մը հաստատել վեհապետական կարողութենէն
վեր էր, եւ բարձրագոյն եկեղեցական իշխանու-
թենէ մը այդպիսի իրաւասութիւն կամ աստի-
ճան հաստատուած չէր, վասն զի ոչ Միսի եւ ոչ
Էջմիածնի աթոռները, որչափ որ գիտեմք, Վոս-
տանդնուպոլիսով զբաղած չեն: Բայց զբաղելու
տանդնուպոլիսով զբաղած չեն: Բայց զբաղելու
ալ պէտք մը չկար: Յովակիմ արդէն կանուխէն
ունէր առաջնորդական իշխանութիւնը, եւ եթէ
ունէր առաջնորդական իշխանութիւնը, եւ 1440 թ. Փլո-
նոյն ինքն Փլորենտիա գացող եւ 1440 թ. Փլո-
րենտիայէ դարձող Յովակիմն էր, հաւանաբար
Վահկացիի օրէն, գոնէ Մուսաբէգեանցի օրէն
անորոշ սահմանով վիճակի մը ընդհանուր առաջ-
նորդը եղած էր: Իր տեղափոխութիւնը պատա-
հարած երբէք էր: Իր տեղափոխութիւնը պատա-
հարած երբէք էր: Իր տեղափոխութիւնը պատա-
հարած երբէք էր: Իր տեղափոխութիւնը պատա-

Թեան, որուն մէջ դժուար էր կրկին իրաւասու-
թեանց սահմանը գծել ու զատել, քանի որ պա-
տրիարքներուն յանձնուած գործառնութիւնները
իրենց բնութեամբ կրօնական եւ եկեղեցական
սերտ առնչութիւններ ունէին: Այսպէս պահանջը
սովորութեան եւ սովորութիւնը օրէնքի փոխուե-
լով, Կոստանդնուպոլսոյ Հայ պատրիարքները
Օսմանեան կայսրութեան Հայերուն վրայ թէ
եկեղեցական եւ թէ կենցաղական իրաւասու-
թիւն կը ստանային, թէպէտեւ այս մասին հայ-
րապետական կամ ժողովական յատուկ որո-
շում մը տրուած չըլլար, (Ազգապատում, էջ 2155—2158):

Թէ Զամբանի պատմածին եւ թէ Օրմա-
նեանի գրածին եւ ենթադրութիւններուն մէջ
մէկէ աւելի կէտեր կան, որ պէտք է սրբագրուին
եւ ճշգրտուին նորագիւտ աղբիւրներու համե-
մատ: Ես այդ աղբիւրներէն մէկին հանդիպեցայ
Ամերիկայի մէջ: Չեռնադրութեան Չեռագիր
Գիրքի մը Յիշատակարանն է այդ: Այս Չե-
ռագիրը գրուած է 1438 թ. Կ. Պոլսի Արքեպիս-
կոպոս Տէր Յովակիմին համար, նորին իսկ յան-
ձնարարութեամբ, Տրապիզոնցի Յակոբ Արեղայի
ձեռքով. ինքնուրու գրչութիւն մը ունի Չեռա-
գիրս, գիւրնութեան թուր գրով, ծաղկուած
վայելչօրէն, եւ գրեթէ շատ լաւ ալ պահուած:
Յովակիմ Արքեպիսկոպոսէն ետքը՝ Չեռնադրու-
թեան Գիրքս 1543-ին կը նուիրուի «մահաւար
Մարիամ»-ու կողմէն Կ. Պոլսի Աստուածատուր
Պատրիարքին (1537—1550):

Չեռագրիս այժմեան տէրն է բնիկ Մա-
րաշի Նշան Կ. Կանիմեան, Նիւ Եօրք Նահանգի
Թոյ քաղաքէն, որ ժառանգած է զայն իր հօր-
մէն: — Կ. Պոլսի առաջին Պատրիարք Յովակիմ
Արքեպիսկոպոսին այս Մաշտոցը՝ կը յուսամ թէ
որ մը պիտի նուիրուի Երուսաղեմի Ս. Յակոբայ
Վանուց Մատենադարանին: Այս տեղ կը գնեմ
Չեռագրիս երկու գլխաւոր եւ կարեւոր Յիշա-
տակարաններն ալ, առաջինը ուղղակի գրիչ
Յակոբ Արեղի ձեռքէն, իսկ երկրորդը՝ գրուած
է Չեռագրիս Աստուածատուր Պատրիարքին
իրեւել յիշապակ տրուելուն առթիւ, նորին իսկ
Աստուածատուր Վարդապետի ձեռքով:

Ա.

— «Գրեցաւ Գիրքս Չեռնադրութեան
թվ. ՊՁէ (= 1438): Ի վայելումն Արհիե-
պիսկոպոսին Տէր Յովակիմին Կոստանդի-
նու պալատի: Զոր Տէր Աստուած վայելեալ (sic)
տացէ յամբամն ժամանակաց ամէն:

Կատարեցաւ հրամայեալն ի քէն ով Տէր
պատուական: Զսակաւ գծիկս ընկալ յանպիտոն
Յակոբ արեղէ տրապիզոնցոյ, իրեւել զիւր-
եւէջս այրոյն: Եւ անմեղադիր լեր խոշորութեան
եւ անարհեստութեան եւ սխալանաց սորա. զի
կար մեր այսչափ էր, եւ մի մոռանար ի մտաց
քոց սուրբ ի բարի մասին զանարժանս աղա-
չեմ»:

Բ.

— «Զվերջին ստացող սուրբ տառիս, որ
Չեռնադրութեան Գիրք կօչեմ, զմահաւար
Մարիամն, ետու զայ յիշատակ ինձ եւ ծնո-
ղաց իմոց եւ յամենայն յարեան մերձաւորաց
իմոց, ի ձեռն (ի ձեռս?) Աստուածատուր
Վարդապետին, որ է յայժմու ժամանակիս
պատրիարք Կոստանդինուպալատի մայրա-
քաղաքի, զոր տէր Աստուած զինքն հաստա-
տուն եւ անդրդուելի պահեսցէ մինչեւ ի խորին
ծերութիւն ի վերայ դաւաղանին իւրոյ ամէն:

Արդ աղաչեմ զձեզ ով հանդիպողք սուրբ
տառիս կարգալով կամ աւրինակելով յիշեցնել
ի մաքրափայլ յաղաթս ձեր զմահաւար Մա-
րիամն եւ զայրն իմ բարեսէր զխոնայ յո-
վասափն եւ զորդիքն իմ զխոնայ Պաղշին
եւ զհաճի Կիրակոսն եւ զամենայն արեան մեր-
ձօրսն մեր, ասացէք լիակատար սիրով. լոյս
փառաց Քրիստոս Որդի Աստուծոյ, ի գալստեան
քո հայրենի փառաւք, ողորմեայ ամենայն վերա-
գրելոցս ի սմայ եւ որք բանիւ մեզ ասացէ,
գործովք նմայ կատարէ Քրիստոս Աստուած մեր,
միջնորդութեամբ մաւր իւրոյ Մարիամու եւ յա-
մենայն սրբոց յամէն:

Գրեցաւ սակաւ գիրս ձեռամբ Աստուածա-
տուր Պատրիարքին. ի թվին ՇՂԲ (= 1543):
Ապրիլ ԻԱ (= 21):

Այս Յիշատակարաններու լեզուն ալ, ի-
մասան ալ շատ պարզ են. եւ առաջին յիշատա-
կարանը ցոյց կու տայ թէ Յովակիմ Արքեպիս-
կոպոս 1438 թ., այսինքն՝ Ֆաթիհի կողմէն Կ. Պոլ-
սի առումէն 15 տարի յառաջ արդէն Առաջնորդն
էր Կ. Պոլսի Հայոց:

Ասիկա ցոյց կու տայ նաեւ թէ Կ. Պոլսի
հայ բնակչութիւն մը ունէր արդէն, եւ այս հայ
բնակչութիւնն ալ ունէր իր կազմակերպեալ
Առաջնորդութիւնը, որուն սկիզբն ու ծագումը
թէեւ անծանօթ է մեզ, բայց անհաւանական չէ
գնել խաչիկ Կաթողիկոսէն (973—992) յա-
ռաջ, որ կազմակերպեց Արեւմուտքի հայ դա-
շութները՝ յատկապէս ձեռնադրեալ Եպիսկո-

կիմը եւ Կ. Պոլսի եւ առաջին պատրիարք կ'ընէ զայն՝ 1461 թ. այսինքն՝ Կ. Պոլսի առումէն (1453) ուժը տարի ետքը, իբրեւ արդիւնք Ֆաթիհի եւ Յովակիմի նախածանօթ բարեկամութեան եւ Ֆաթիհի ինքնաբեր խոստումին։

Այս զարդարած պատմութեան հիմը բուրովին ստոյգ է. այսինքն՝ Յովակիմ Արքեպիսկոպոս, Կ Պոլսի անցնելէ յառաջ, Առաջնորդն էր Պրուսայի։ Բայց թէ Յովակիմ Պրուսայի Առաջնորդութենէն ուղղակի կոչուեցաւ Կ. Պոլսի Պատրիարքութեան, — այս ուստով հաւանական չի թուիր, եւ հետեւաբար, իրեւ պատմական ստուգութիւն կը մնայ նոյն ինքն Յովակիմի համար գրուած *Ձեռնադրութեան Գիրքին* յիշատակարանին տեղեկութիւնը։ Արդ, ըստ այս տեղեկութեան, պէտք է ըսել՝ թէ Յովակիմ Արքեպիսկոպոս նախապէս Առաջնորդն էր Պրուսայի, եւ այդ առթիւ ծանօթացած Ֆաթիհին եւ շահած անոր համակրանքը. եւ յետոյ՝ Պրուսայի Առաջնորդութենէն կոչուած է Կ. Պոլսի Առաջնորդութեան, եւ այդ պաշտօնի վրայ կը գտնուէր 1430 թ., այսինքն Կ. Պոլսի առումէն տասնըինգ տարի յառաջ. այնպէս որ երբ Ֆաթիհ առաւ զԿ. Պոլսի 1453 թ., իրեն ծանօթ Պրուսայի Յովակիմ Եպիսկոպոսը արգէն Կ. Պոլսի Առաջնորդն էր 15 տարիներէ ի վեր¹, եւ Կ. Պոլսի գրաւումէն ուժը տարի ետքը Ֆաթիհ կատարեց իր խոստումը, Պատրիարք կարգելով զայն Կ. Պոլսի եւ շրջակայից Հայոց վրայ, եւ այս վեհապետական կարգադրութեամբ Կ. Պոլսի Հայոց Առաջնորդութիւնը վերածուեցաւ Կ. Պոլսի Հայ Պատրիարքութեան²։

Սրբադրութեան եւ ուղղութեան կարօտ ուրիշ կէտ մըն ալ, ինչպէս որ տեսնաք վերեւ Օրմանեանի այն ձգտումն է, որով քանի մը ժամանակակից Յովակիմները կ'ուզէ նոյնացնել Կ. Պոլսի առաջին Պատրիարք Յովակիմի հետ, պարզապէս տարուելով անուններու նոյնութենէն, առանց պատմական հիմքի եւ թուիքի։

¹ Հաւանաբար Յովակիմ Արքեպիս. *Ձեռնադրութեան* այդ Մաշտոցը գրել տուաւ իր Կ. Պոլսի Առաջնորդութեան սիկքը, 1438 թ., որով՝ 15 տարի Առաջնորդական պաշտօն վարած կ'ըլլայ մինչեւ 1461, որ թուականն է իր Պատրիարքութեան։

² Թերեւս կարենայ ենթադրուիլ նաեւ թէ Յովակիմ Կ. Պոլսի Առաջնորդութենէն կոչուած ըլլայ Պրուսայի իբրեւ Պատրիարք։ Այսպիսի ենթադրութիւն մը թէեւ անհաւանական չէ, բայց մեզի աւելի բնական կը թուի Պրուսայի Առաջնորդութենէն Կ. Պոլսի Առաջնորդութիւն եւ թագաւոր Կ. Պոլսի Պատրիարքութիւն յառաջդիմական ընթացքը։

Քանի որ ըստ *Ձեռնադրութեան Մաշտոցի* յիշատակարանին, 1438 թ. Յովակիմ Արքեպիս. Կ. Պոլսի Առաջնորդական Աթոռին վրայ է, այս Յովակիմը, ամենեւին չի կրնար նոյնանալ Հալէպի (Բերիոյ) Յովակիմ Եպիսկոպոսին հետ, որ 1438—1440, Վահկացի Կոստանդին ԶԲՊ Կաթողիկոսի (1430—1430) կողմէն իրրեւ պատգամաւոր Փլորինտիա ղերուեցաւ (Հմմտ. Չամչեան, Գ, էջ 475, 478, 483)։

Իսկ այն Յովակիմ Եպիսկոպոսն, որ Կոստինայի Եկեղեցին նորոգած է, որ Պրուսայի Եպիսկոպոս եղած է, որ Ֆիլիպէի ալ առաջնորդ յիշուած է, եւ որ Կ. Պոլսոյ հայերուն պետն եղած է, ըստ իս այսպիսի իրարու շարայարեալ պաշտօնավարութիւն մը չի կրնար բոլորովին հաւաստի ըլլալ։

Պրուսայի Առաջնորդ կամ Եպիսկոպոս Յովակիմ, ըստ ամենայն հաւանութեան, միեւնոյն անձն է Կոստինայի Եկեղեցին նորոգող Յովակիմի հետ. որովհետեւ Կոստինա այն ատեններ կրնար մէկ թեմն եղած ըլլալ Պրուսայի առաջնորդական վիճակին, եւ ոչ թէ առանձին վիճակ մը, անկախ Պրուսայէն, ինչպէս որ էր վերջին ժամանակներու մէջ։

Բայց թէ Պրուսայի Յովակիմը եւ Կ. Պոլսի առաջին Պատրիարք Յովակիմը, դէ սկիզբէն յառած ըլլայ նորածիլ Օսմանեան վեհապետներուն, եւ քայլ առ քայլ հետեւած անոնց երկրակալութեանց եւ տեղափոխուած անոնց հետ կեդրոնէ կեդրոն, եւ տարածած ըլլայ իր հոգեւոր իշխանութիւնը հետզհետէ Օսմանեան բանակի առջեւ նուաճեալ բոլոր երկիրներու Հայոց վրայ, ինչպէս որ կ'ուզէ հաւաստել Օրմանեան, ասիկա գեղեցիկ ենթադրութենէ մը աւելի արժէք մը չի ներկայացներ։

Օրմանեան ինքն ալ կ'ընդհարի իր ենթադրութեան դժուարութեան, եւ կերպով մը կ'ուզէ առաջին առնուլ ատոր, երբ դիտել կուտայ. — «Չենք ուզեր ըսել թէ բոլոր տեղափոխութեանց ժամանակակից եղած է (Յովակիմ)՝ վասն զի Օրմանի Պրուսա հաստատուելէն մինչեւ Ֆաթիհի Կ. Պոլսի հաստատուելը դարէ մը աւելի ատեն անցած է։ Բայց յայտնի է թէ (?) բոլոր հին ու նոր Օսմանեան կենդրոնները (Սէօյիւղլի, Կոստինայի մօտ, Պրուսա, Ադրիանուպոլիս, հետեւաբար կ'ուզէ ըսել եւ Ֆիլիպէ, Կ. Պոլիս) միեւնոյն Յովակիմի վիճակը կազմած են, եւ իւր պաշտօնին բերմամբ է, որ վերջին անգամ Կոստանդնուպոլիս եկած է» (Ազգապատում, էջ 2155)։ Եւ դժուարութիւնը հարթելու համար

կենթադրէ որ Յովակիմ, որ իբրեւ թէ մինչեւ
1474 կը յիշուի եղբր, 1438 ին 40 տարեկան
եղած պիտի ըլլայ, իբրեւ Հալէպի Եպիսկոպոս (?)
կոստանդին Զ. կաթողիկոսի կողմէն պատգա-
մաւոր գացած ատեն Հռոմ կամ Փլորինտիա,
որով՝ 1474 ին ալ 78 տարեկան կ'ըլլայ եղբր,
եւ ասկից ետքը շատ ապրած չէ՝ եղբր:

2ես գիտեր սակայն թէ ինչո՞ւ համար՝
դո՞ւնէ 30 տարեկան, կամ աւելի ու պակաս չ'են-
թադրեր Յովակիմին տարիքը 1438ին, քանի որ
երիտասարդներու եպիսկոպոսական ձեռնադրու-
թիւնը սովորական բան մըն էր այդ դարերուն ալ։

Այդ բոլորը աւելորդ են թագրութեան
 են պատմութեան համար, որ պէտք է գրուի
 ստոյգ թուականներով եւ իրողութիւններով,
 եւ որովհետեւ մենք այսօր աչքի առջեւ ունինք
 Յովակիմ Առաքելի Արհիեպիսկոպոս Տէր Յովա-
 նոյն ինքն Կ. Պոլսի Արհիեպիսկոպոս Տէր Այծի
 կիմի Մաշտոցին Յիշատակարանը, առ այժմ
 հաստատ պէտք է կենալ ատոր ժամանակագրու-
 թեան վրայ, եւ ըսել, թէ 1438 ին տրդէն
 Յովակիմ Առաքելորդն է Կ. Պոլսի, որ ետքը, ըստ
 Զամբանի, 1461 ին կը բարձրանայ պատրիար-
 Քական դիրքին: 1438 եւ 1461

Քական դիրքին:
Այդ երկու թուականներ, 1438 եւ 1461,
չառ կարեւոր են: Եւ եթէ, ըստ Օրմանեանի,
ենթադրենք թէ Կ. Պոլսի Յովակիմը (եւ ոչ թէ
Բերիոյ Յովակիմը) 1438ին 40 տարեկան կար,
1461ին, Պատրիարք եղած ատեն՝ պիտի ըլլար
63 տարեկան. իսկ 1478ին, որ ըստ Չամչեանի,
վերջին տարին է Յովակիմի պատրիարքութեան,
եղած պիտի ըլլայ 80 տարեկան ծերունի մը, որ
չառ կը թուի ինձ: Ամէն պարագայի մէջ՝ 1478ը
թուականն է Կ. Պոլսի առաջին պատրիարք Յո-
վակիմ Արքեպիսկոպոսին, որուն յաջորդած են
ըստ Չամչեանի ժամանակագրութեան.

1478—1489.

Չամչեանի ժամանակագրութիւն	1478—1489.
Նիկողայոս	1489—1509.
Կարապետ Ա.	1509—1526.
Մարտիրոս Ա.	1526—1537.
Գրիգոր Ա.	1537—1550.
Աստուածատուր Ա.	1550—1569.

Աստուածատուր Ա. 1551
Այս Աստուածատուր վարդապետն է որ
երբև յիշատակ կը ստանայ և Պոլսոյ Յովակիմ
Արհիեպիսկոպոսին եւ պատրիարքին շնորհա-
ղործեան Գիրքը Մահապի Մարիամն,
1543 թ, եւ իր ձեռքով կը գրէ ասոր երկրորդ
Յիշատակարանը:

8 Սեպտեմբեր 1924.
Արդանթըն, Միսս.

ՊՐՈՓ. Ն. ՄԵՌԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ
ՂԵՆՈՒՄ¹

U.

Բնութեան թագուհի, պատմութեան մայրաքաղաք եւ Հայաստանի սիրտ վան քաղաքը ուղիշ 100 տարի սրանից առաջ իւր վրայ գրաւեց եւրոպական հնախոյզ-գիտնականների պատմութիւնը։ Պատմութեան բեմից անհետացած արեւելեան մի շարք մեծ ու փոքր ազգերի տացած արեւելեան մի շարք մեծ ու փոքր ազգերի պատմութիւնն ու լեզուն, որոնք գետնաթաղ էին եղել եւ կամ այնչափացել, գիտութեան շնորհիւ երակենդանացան։ Մեծած լեզուները խօսեցին։ Գլխավոր աշխարհը պատմական նոր ուսումնաբանութեանց անսպառ աղբիւրների առջեւ կանգնեց։ Եգիպտոսի, Ասորեստանի եւ Բաբելոնի պեղումներն ու գլխավոր ուսումնասիրությունները պատճառ դարձան, որ հնախոյզ-գիտնականները փնտռեն ու հետախուզեն Միջագետքից դէպի հիւսիս-արեւելքը տարածուած բնակչությանը, տաւրոսեան լեռնաշղթաներից եկրամասերը, տաւրոսեան լեռնաշղթաներից սկսած Թուրքիայի խորքերը, Պարսկաստանի հարաւ-արեւմտեան երկրները եւ մահաւանդ պատմական Հայաստանը եւ այստեղից մինչեւ

Աշխարհի նոր եւ հեռանդուն

Կասպից ծովը ավերելը:
Գլխավան աշխարհը նոր եւ հռանդուն
աշխատանքների լծուեց: Հնախոյզները ցրուեցին
Առաջևոր Ասիոյ ամեն կողմեր մեռած լեզուներին
խօսեցնելու եւ պատմական աշխարհից անհե-
տացած ազգերի եւ ցեղերի պատմութիւնը ու-
սումնասիրելու համար:

սուսնասիրելու համար:
Գլխական պեղումներն ու հետախուզու-
թիւնները Եփրատում, Ասորեստանում եւ
այլուր հրապարակ էին հանել բազմահազար
բեւեռագիր արձանագրութիւններ՝ թրծուած
աղւեսների, քարարձանների եւ կամ քարա-
ժայռերի վրայ, որոնք եկան լոյս տեսելու Հի-
թիթների, Խալտերի, Ուրարտացիների եւ մի
թիթների. Խալտերի, Ուրարտացիների եւ մի
շարք ուրիշ ազգերի մոռացուած եւ անյայտ
պատմութեանց վրայ: Արեւելքի հին ազգերի
պատմութեանց վրայ: Արեւելքի հին ազգերի
կատարելու համար սկսուեց մի տարօրինակ աշ-
խատանք ի յայտ գալ պատմագիտական աշխար-
հատանք ի յայտ գալ պատմագիտական աշխար-
հում, որի նպատակն էր ամէն գնով ու ջոհո-
ղութիւններով ուսումնասիրել Արեւելքը:

Եւսոյ մասին եւ մի բնութարձակ յօդուած գրել եմ
գրել։ Գրեցայէլ Աւարանդեանին խմբագրու. թեամբ Թիֆլիսում
հրատարակուող «Հորիզոն» մեծ օրաթերթի 1916 թուի
Դեկտեմբեր 22ի 211րդ համարում։